

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Ավտոապահովագրողների
Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի
30/04/2019թ. թիվ 1-Լ որոշմամբ
Փոփոխված է
26/10/2021թ թիվ 7-Լ որոշմամբ
14/08/2025թ թիվ 5-Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

«24» սեպտեմբերի 2025թ.

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Հայաստանի Ավտոապահովագրողների
Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի
նախագահ

Մարտին Գալստյան

Արմեն Նուրբեկյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ

(ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԵՐՔԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ)

ԵՐԵՎԱՆ - 2025

1. Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոն (այսուհետ՝ Բյուրո) ստեղծում և վարում է ԱՊՊԱ համակարգում հրապարակվող և ապահովագրական ընկերությունների և (կամ) ՀՀ կենտրոնական բանկի ներքին օգտագործման համար տրամադրվող վիճակագրության մատրիցա (այսուհետ՝ մատրիցա)՝ սույն կանոնների **Հավելված 1-ով** սահմանված ձևով և բովանդակությամբ, որը հրապարակվում է Բյուրոյի պաշտոնական ինտերնետային կայքի «Իրավական ակտեր» բաժնի «Բյուրոյի կանոններ» ենթաբաժնում: Ընդ որում՝ մատրիցայի «Ընթացիկ հասանելիություն» անվանումով սյունակներում արտացոլված տեղեկատվությունն ըստ անհրաժեշտության պարբերաբար թարմացվում են Բյուրոյի կողմից՝ հիմք ընդունելով տվյալ պահին Բյուրոյի կողմից համապատասխան տվյալի ստացման տեխնիկական հնարավորությունները, և մատրիցայի թարմացված տարբերակը փոփոխության նույն աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է Բյուրոյի կայքի՝ սույն կետում նշված միևնույն մասում:

2. Բյուրոն իր ինտերնետային կայքի «Վիճակագրություն» բաժնում հրապարակում է հետևյալ վիճակագրական հաշվետվությունները՝

1) ԱՊՊԱ ոլորտում իրականացված գործառնությունների վերաբերյալ, որը հրապարակվում է ամսական պարբերականությամբ՝ մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը՝ ընդգրկելով տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև հաշվետու ժամանակահատվածի վերջին օրն ընկած ժամանակահատվածը՝ սույն կանոնների համապատասխանաբար **Հավելված 2-ով և Հավելված 3-ով** սահմանված ձևերով և բովանդակությամբ,

2) ԱՊՊԱ ոլորտում ապահովագրողների դեմ ներկայացված բողոքների և (կամ) գործարար վարվելակերպի, սպառողների սպասարկման որակը բնութագրող այլ ցուցանիշների վերաբերյալ, որը հրապարակվում է կիսամյակային պարբերականությամբ՝ մինչև յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող երկրորդ ամսվա երրորդ աշխատանքային օրը՝ սույն կանոնների **Հավելված 4-ով** սահմանված ձևով և բովանդակությամբ

3) Բյուրո ներկայացված բողոքների և Բյուրոյի կողմից նշանակված կրկնակի փորձաքննությունների քանակի վերաբերյալ, որը հրապարակվում է ամսական պարբերականությամբ՝ մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը՝ ընդգրկելով տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև հաշվետու ժամանակահատվածի վերջին օրն ընկած ժամանակահատվածը՝ սույն կանոնների **Հավելված 5-ով** սահմանված ձևով և բովանդակությամբ:

3. Սույն կանոնների 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հաշվետվություններում արտացոլվող տեղեկատվության ստացման համար Բյուրոն առաջնահերթ օգտվում է ԱՊՊԱ միասնական տեղեկատվական համակարգում և այլ էլեկտրոնային տեղեկատվական համակարգերում (այսուհետ՝ Միասնական տեղեկատվական համակարգ) առկա համապատասխան տեղեկատվության աղբյուրներից, եթե դրանք ամբողջապես արտացոլում են (կարգավորումների համաձայն պետք է արտացոլեն) հրապարակվող տվյալի համար հիմք հանդիսացող տեղեկությունները: Հաշվետվությունների մեջ ներառված, սակայն Միասնական տեղեկատվական համակարգում բացակայող տվյալները Բյուրոն ստանում է իր անդամ ապահովագրական

ընկերություններից (այսուհետ՝ ընկերություններ)՝ համապատասխան հաշվետվությունների ստացման միջոցով: Ընդ որում՝

1) այդ հաշվետվությունների ձևը, ինչպես նաև դրանց լրացման հրահանգը հաստատվում և պարբերաբար փոփոխվում է Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից՝ հաշվի առնելով սույն կետով նախատեսված Միասնական տեղեկատվական համակարգից տվյալների ստացման ընթացիկ հնարավորությունները,

2) ապահովագրական ընկերությունների համար հաշվետվությունների ձևերը կիրառելի են (գործողության մեջ են մտնում) Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից ապահովագրական ընկերություններին ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետներում,

3) ապահովագրական ընկերությունները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար հաշվետվությունը Բյուրոյին ուղարկել մինչև տվյալ ամսվանը հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը՝ «xls» կամ «xlsx» ձևաչափով՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով կամ ընկերության իրավասու էլեկտրոնային հասցեից Բյուրոյի իրավասու էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով: Ընդ որում, ներկայացվող ֆայլերի անունները պետք կազմված լինեն հետևյալ սկզբունքով՝ «APPA01XXYYMM», որտեղ՝ XX-ը ապահովագրական ընկերության ԱՊՊԱ վկայագրերի սերիան է, YY-ը՝ հաշվետու տարին (երկուական սիմվոլով), MM-ը՝ հաշվետու ամիսը (երկուական սիմվոլով):

3.1. Սույն կանոնների 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունում արտացոլվող տեղեկատվության ստացման նպատակով Բյուրոն օգտվում է ապահովագրական ընկերությունների պաշտոնական ինտերնետային կայքերում հրապարակված վիճակագրական տվյալներից:

4. Մատրիցայում արտացոլված տեղեկատվության՝ ապահովագրական ընկերություններին (ընկերությունների կողմից առարկություններ չներկայացվելու դեպքերում) և (կամ) ՀՀ կենտրոնական բանկին մեկանգամյա տրամադրման համար (համապատասխան պահանջը կամ անհրաժեշտությունն առաջանալու դեպքերում) Բյուրոյի գործադիր տնօրենը կարող է հաստատել նաև մեկանգամյա հաշվետվությունների ձևեր, որոնցում արտացոլված տեղեկությունները Բյուրոյին ներկայացվում են Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից ապահովագրական ընկերություններին ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետներում: Ընդ որում, մեկանգամյա հաշվետվությունների ձևը սահմանելիս նույնպես հաշվի են առնվում սույն կանոնների 3-րդ կետում նշված՝ Միասնական տեղեկատվական համակարգից տվյալների ստացման ընթացիկ հնարավորությունները: (լրաց. է 26/10/2021թ թիվ 7-Լ)

[illegible]

[illegible]

 ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՊՊԱ ոլորտի մի շարք ցուցանիշների վերաբերյալ							
Հաշվետու ժամանակահատված՝ 20__ թ. հունվարի 1-ից մինչև 20__ թ. _____)							
1	Ցուցանիշ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՊԱ ԶԱՄԱՆԱԳ			ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ		
		Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում	Հաշվետու ժամանակահատվածում	Աճ ↓ Նվազում	1	2	...
1	ԱՊՊԱ պայմանագրերի կնքման գործընթաց						
1.1	Գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող տրանսպորտային միջոցների բանակ (Հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ)						
1.2	Կնքված ԱՊՊԱ պայմանագրեր	Քանակ					
		Ապահովագրավճար (ՀՀ դրամ)					
		Այդ թվում՝ առցանց եղանակով կնքված	Քանակ				
		Ընդհանուր բանակում տեսակարար կշիռ					
	Մեկ պայմանագրի գծով միջին ապահովագրավճար (ՀՀ դրամ)						
	Պայմանագրերի միջին ժամկետայնություն						
1.3	Գործողության մեջ մտած ԱՊՊԱ պայմանագրեր	Քանակ					
		Ապահովագրավճար (ՀՀ դրամ)					
1.4	Դադարեցված ԱՊՊԱ պայմանագրեր	Քանակ					
		Վերադարձված կամ վերադարձման ենթակա ապահովագրավճարներ (ՀՀ դրամ)					
2	ԱՊՊԱ ոլորտում կատարված հատուցումների գործընթաց						
2.1	ԱՊՊԱ համակարգ ներկայացված հատուցման դիմումների բանակ						
2.1.1	ԱՊՊԱ համակարգում գրանցված պատահարների բանակ						
2.2	ԱՊՊԱ համակարգում կարգավորված հատուցման դիմումներ	Քանակ	Ընդհանուր				
			Անձնական				
			Գույքային				
		Գումար (ՀՀ դրամ)	Ընդհանուր				
			Անձնական				
			Գույքային				
		Միջին հատուցում (ՀՀ դրամ)	Ընդհանուր				
			Անձնական				
	Գույքային						
	Պատահարների պարզեցված գրանցման միջոցով	Քանակ					
		Գումար					
		Միջին հատուցում					
2.3	ԱՊՊԱ համակարգում չբավարարված պահանջներ	Մերժված դիմումների բանակ					
	Հատուցումից հրաժարված դիմումների բանակ						
3	ԱՊՊԱ ոլորտում ստանձնած պարտավորությունները կատարելու նպատակով ձյալորված պահուստները (ՀՀ դրամ) (Հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ)						
3.1	Տեխնիկական պահուստները	Զվաստակած ապահովագրավճարների պահուստ					
		Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ					
	Տեղի ունեցած, սակայն դեռևս Ապահովագրողին չներկայացված պահանջների պահուստ						
3.2	Տեխնիկական պահուստների փոփոխությունները նախորդ տարվա վերջին օրվա համեմատությամբ	Զվաստակած ապահովագրավճարների պահուստ					
		Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ					
	Տեղի ունեցած, սակայն դեռևս Ապահովագրողին չներկայացված պահանջների պահուստ						
4	ԱՊՊԱ ոլորտի վնասաբերությունը (Հատուցումների մակարդակը) (%)						
4.1	Վնասաբերություն						
5	Այլ ցուցանիշներ (Ներկայացվում է տարեկան կտրվածքով)						
	Ցուցանիշ	20__ թ.	20__ թ.	Աճ ↓ Նվազում			
5.1	Տարեվերջի դրությամբ գործող ԱՊՊԱ պայմանագրերով Ապահովագրողների դասերի բաշխվածքը	Բնութային դասերում գտնվող Ապահովագրողների բանակ					
		Մայրուսային դասերում գտնվող Ապահովագրողների բանակ					
		Բազմադասային դասում գտնվող Ապահովագրողների բանակ					



ԱՊՊԱ ոլորտում մի շարք ցուցանիշներում ապահովագրական ընկերությունների մասնաբաժինների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատված՝ 20__ թ. հունվարի 1-ից մինչև 20__ թ. _____

ԱՊՊԱ պալմանագրերի կնքման գործընթաց

[illegible]

ԱՊՊԱ ոլորտում կատարված հատուկ ուղումների գործընթաց

[illegible]



ՀՀ ԱԳՊԱ ԼՈՐՏՈՒՄ ԵՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎԻՃԱՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԳՊԱ ոլորտում ապահովագրողների դեմ ներկայացված բողոքների և (կամ) գործարար վարվելակերպի, սպառողների սպասարկման որակը բնութագրող այլ ցուցանիշների վերաբերյալ

Ապահովագրական ընկերության գծով ԱԳՊԱ ոլորտի բողոքները՝ ըստ տեսակների, ինչպես նաև գործարար վարվելակերպի, սպառողների սպասարկման որակը բնութագրող այլ ցուցանիշները

Հաշվետու կիսամյակ __

Ապահովագրական ընկերության անվանումը	Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված հատուցումների հետ կապված բողոքների տեսակարար կշիռը հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ ընկերության կողմից կայացված հատուցման (տրամադրման և մերժման) որոշումների քանակում (%)		Ամբողջությամբ բավարարված բողոքների տեսակարար կշիռը հատուցումների հետ կապված ընկերության դեմ ներկայացված բողոքների ընդհանուր քանակում (%)		Հատուցումների մերժմանը վերաբերող բողոքների տեսակարար կշիռը հատուցումների հետ կապված ընկերության դեմ բողոքների ընդհանուր քանակում (%)		«Վնասի չափի հետ անհամապատասխան վերաբերող բողոքները» տեսակարար կշիռը հատուցումների հետ կապված ընկերության դեմ բողոքների ընդհանուր քանակում (%)		Հատուցման ժամկետների կետանշմանը վերաբերող բողոքների տեսակարար կշիռը հատուցումների հետ կապված ընկերության դեմ բողոքների ընդհանուր քանակում (%)		Ընկերության կողմից հատուցման դիմումի կարգավորման միջին տևողությունը (օր) (չեն ներառվում այն գործերը, որոնցով իրականացվել է վարչական, դատական կարգով քաղաքացիական կամ քրեական վարույթ)		Ընկերության կողմից նշանակված վնասի փորձաքննությունների մեջ այն փորձաքննությունների տեսակարար կշիռը, որոնց գծով ներկայացվել է կրկնակի փորձաքննություն կամ որոնց գծով պահանջ է ներկայացվել ֆինանսական համակարգի հաշտարարին (%)		Ընկերության կողմից նշանակված վնասի փորձաքննությունների գծով ներկայացված կրկնակի փորձաքննությունների կամ ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացված պահանջների մեջ այն կրկնակի փորձաքննությունների (S<< պահանջների) տեսակարար կշիռը, որոնցով առաջնային փորձաքննության արդյունքներն նախատրեմ (20%-ով, բայց ոչ պակաս, քան 40.000 ՀՀ դրամը, կամ 200.000 ՀՀ դրամի չափով) փոփոխվել են	
	Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում	Հաշվետու ժամանակահատվածում	Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում	Հաշվետու ժամանակահատվածում	Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում	Հաշվետու ժամանակահատվածում	Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում	Հաշվետու ժամանակահատվածում	Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում	Հաշվետու ժամանակահատվածում	Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում	Հաշվետու ժամանակահատվածում	Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում	Հաշվետու ժամանակահատվածում	Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում	Հաշվետու ժամանակահատվածում
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

* Անհամապատասխանությունների ներքո դիտարկվում են գույքին պատճառված վնասի գծով լրացուցիչ և կրկնակի փորձաքննության պահանջները, ինչպես նաև ֆինանսական համակարգի հաշտարարին ուղղված պահանջները: Ընդ որում, միևնույն պատահարի գծով միևնույն գույքին պատճառված վնասների գծով սույն տողով նախատեսված փ քանի պահանջ ներկայացվելու դեպքում դրանք հաշվարկում ներառվում են որպես մեկ պահանջ:

 ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ Բյուրո ներկայացված բողոքների և Բյուրոյի կողմից նշանակված կրկնակի փորձաքննությունների քանակների վերաբերյալ				
Հաշվետու ժամանակահատված՝ 20__ թ. հունվարի 1-ից մինչև 20__ թ. _____)				
	Ցուցանիշ		Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում	Հաշվետու ժամանակահատվածում
1	Բյուրո ներկայացված բողոքների քանակ՝ ըստ հետևյալ թեմաների	Ապահովագրական պայմանագրերի կնքման ընթացակարգեր		
		Մեղավորության որոշման ընթացակարգեր		
		Վնասների գնահատում		
		Հետադարձ պահանջի իրավունք		
		Հատուցման մերժում		
		Տույժ ու տուգանքներ (հատուցման և փորձաքննության գործընթացների ժամկետների չպահպանման համար)		
		Միջնորդավճարներ		
		Ապահովագրավճար/սակագին/բոնուս-մալուս		
		Հաղորդակցման և տրամադրվող տեղեկատվության թափանցիկություն		
		Սպասարկման որակի այլ խնդիրներ		
		Անձնական տվյալների պաշտպանություն		
		Խաբեություն, խարդախություն		
2	Բյուրոյի կողմից նշանակված կրկնակի փորձաքննությունների քանակ՝ ըստ հետևյալ փորձաքննության տեսակների	Ապահովագրական ընկերության կողմից նշանակված մեղավորության որոշման փորձաքննության արդյունքների բողոքարկում կրկնակի փորձաքննություն պահանջելու միջոցով		
		Ապահովագրական ընկերության կողմից նշանակված վնասի որոշման փորձաքննության արդյունքների բողոքարկում կրկնակի փորձաքննություն պահանջելու միջոցով		